

9287



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 24 » 08 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 166 - 24

Նախաձեռնող՝

«Նաիրի» բժշկական կենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Պարոնյան փողոց 21

Գործունեությունը՝

«Նաիրի» բժշկական կենտրոնի վերակառուցում
և նոր մասնաշենքերի կառուցում
ք. Երևան

Առդիր՝ 7 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 166 - 24

«27» 08 2024թ.

Երևան քաղաքի «Նաիրի» բժշկական կենտրոնի վերակառուցման և նոր մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝	«Նաիրի» բժշկական կենտրոն ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պարոնյան փողոց 21 հասցե

Ներածական մաս. «Նաիրի» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն նախատեսում է Երևան քաղաքի Պարոնյան 21 հասցեում «Նաիրի» բժշկական կենտրոնի վերակառուցման և նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքներ, որի արդյունքում կկառուցվի ժամակակից լուծումներով բժշկական համալիր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից 2023թ. մարտի 17-ին տրված N01/18-07/2-դ-32257-215 ճարտարապետական նախագծային առաջադրանքը:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1002-1004 մետրերի սահմաններում: Գործունեության տարածքին կից գտնվում են բնակելի հասարակական նշանակության շենք շինություններ:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:



Նկարագրական մաս. Բժշկական կենտրոնի գոյություն ունեցող շինությունների վերականգնումը և ընդլայնան իրականացումը նպատակաուղղված է մեծացնելու բաժանմունքների տարածքները՝ ժամանակակից սարքավորումներով ապահովել համար:

Շինարարության ընթացքում չի խափանվի բժշկական կենտրոնի աշխատանքները: Տարածքի մոտեցումներն ապահովված են Պարոնյան փողոցից:

Լաբորատորիայի, ախտահանման բաժանմունքի և կաթսայատան ընդլայնման և բարելավման համար կապամոնտաժվի գոյություն ունեցող մեկ հարկանի շինությունը:

Կաթսայատունը կլինի տարածքի ետնամասում, որտեղ նախատեսվում է երկու էլեկտրական կաթսաներ (մեկն աշխատող, մյուսը ռեզերվային) և երկու 1.5 տ տարողունակությամբ ջրի կուտակման բաք:

Ջեռուցումը և օդափոխությունը ողջ համալիրում կատարվելու է կենտրոնական կաթսայատնից: Նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ՝ արտաձուլը կատարվելու է արտաձման համակարգերի միջոցով, օդահեռացումը երկու՝ վերևի և ներքևի գոտիներից: Հասարակական տարածքներից օդի արտաձուլը նախատեսվում է բնական եղանակով:

Համալիրի էներգաարդյունավետության նպատակով Կառավարության 2018թ ապրիլի 4-ի N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան նախատեսվում են լուծումներ՝ ջերմության խնայողության համար նախատեսված է ջերմաօգտահանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք կապահովեն ջերմության բարձր խնայողություն, երեսպատման համակարգ, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի հարկի ջերմամեկուսացում:

Բժշկական կենտրոնի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվել են համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին:

Ջրամատակարարումը հնարավոր կլինի իրականացնել Պարոնյան փողոցով անցնող ջրատարից, կոյուղին՝ կոյուղատարից, հեղեղատարը նույն փողոցով անցնող հեղեղատարից:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում բժշկական կենտրոնի էլեկտրամատակարարումը կիրականացվի ՏԵ3149-ի 0.4 կՎ վահանից, գազամատակարարումը՝ ԳԲԿ Երևան-1 սնող կողմնատար գազատարից:

Գոյություն ունեցող մասնաշենքերի ետնամասում կավելացվի նույն հարկայնությունն ունեցող նոր հատված, իսկ գլխավոր մուտքի շարունակության վրա գտնվող մասնաշենքին կից կավելացվի մասնաշենք՝ գոյություն ունեցող և ավելացող մասնաշենքերի կապի ապահովման համար: Հին և նոր հատվածների միջև կձևավորվի ներքին բակ, որը հիմնականում կձառայի տնտեսական նպատակների համար: Դեպի ներքին բակ կլինի անցում՝ սարքավորումները սպասարկող և հրշեջ մեքենաների համար: Հին և նոր մասնաշենքերի միջև հատվածը կնախատեսվի այցելուների և անձնակազմի համար որպես հանգստի տարածք:

Վերակառուցումից և ընդլայնումից հետո բժշկական կենտրոնը կունենա միջազգային նորմատիվներին համապատասխան հիվանդանոցային բաժանմունքներ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի նախատեսվել են հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար համապատասխան միջոցառումներ՝ թեքահարթակներ:



Վերակառուցումից հետո բժշկական կենտրոնի տարածքում դիախերճարանը չի գործելու և շենքը ծառայելու է որպես հիվանդանոցային համալիրի անվտանգության ծառայության շենք:

Բժշկական կենտրոնի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- տարածքի ընդհանուր մակերես- 14628.6 քմ,
- 0 նիշում գոյություն ունեցող շենքի կառուցապատման մակերես- 3980 քմ,
- նախատեսվող կառուցապատման մակերես- 1740 քմ,
- անջրանցիկ մակերես- 2937 քմ,
- ջրանցիկ ծածկույթով ճեմուղիների մակերես- 1334.8 քմ.
- կանաչապատում- 4636.8 քմ,
- ստորգետնյա հարկերի ընդհանուր մակերես- 4460 քմ,
- նախատեսվող ստորգետնյա կայանատեղի քնքկաը- 57 հատ:

Նախատեսվող գործունեության ընթացում կիրականացվի հիմքերի փորման աշխատանքներ: Ե/բ հիմքերի տեղադրման համար կկատարվի մոտ 11000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ, հանվող 9200 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Առաջին մասնաշենքի տանիքում և գոյություն ունեցող մասնաշենքերի դեպի հարավ ուղղված հատվածներում նախատեսվում է արևային մարտկոցների տեղադրում:

Երկրորդ մասնաշենքի տանիքում կավելացվի տեխնիկական հարկ՝ բոլոր ինժինեռական կոմունիկացիաների բաշխման համար: Երկրորդ մասնաշենքի ամբողջ տանիքը նախատեսվում է կանաչապատել:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար: Շինարարության փուլում ջրցանման համար ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությունները կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ, աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկեր կհանդիսանան՝ հիմքերի փորման ընթացքում և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ վառելիքի արտանետումները (CO, NOx):

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է, հողային, ջրային ռսուրսների, մթնոլորտային օդի պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնցից են՝ շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում, տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,



- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում,

շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի ժամանակավոր պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը հնարավորինս կկանխարգելի փոշու տարածումը,

- շինարարության ընթացքում շենքերի արտաքին մասի ծածկում անթափանց թաղանթով,

- ջրցանի ծավալների այնպիսի հաշվարկվում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,

- հոսքաջրերի հեռացում պարզարան, մեխանիկական նստեցում, նստվածքի հեռացում,

- շինարարական գործընթացներում շինարարական տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում, ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործում,

- շինարարական տեխնիկայի վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում,

- աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում և առաջացած շինարարական թափոնների տեղափում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր և այլն:

Շաղախի և բետոնի առաքում Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Երևան քաղաքում շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում նախատեսված միջոցառումների իրականացմամբ:

Նախատեսվող գործունեությունը ջրային ռեսուրսների աղտոտվածություն կամ հնարավոր ազդեցություն չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ՝ ուղղված հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցմանը:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների՝ հրդեհի առաջացման, հեղուկ նյութերի արտահոսքի, շահագործվող տեխնիկայի հետ վթարների և այլն, այդ թվում նաև աղմուկի և թրթռումների հնարավոր ազդեցության բացառման, նվազեցման համար ևս նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են հայտի համապատասխան բաժիններում:

Նախատեսված բնապահպանական բոլոր միջոցառումները ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակները կլինեն կենցաղային աղբը՝ 12.48 տ, որը կհավաքվի տեղադրված աղբահավաք կոնտեյներներում, մոտ 1260 խմ շինարարական աղբը, որը ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատ կացված վայր, մնացորդային գրունտ՝ 9200 խմ ծավալով, որը կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:



Գործունեության ընթացքում տարածքում ազդեցության ենթակա կլինեն ութ ծառ, որոնցից 3 հատ սոճիները կհատվեն, իսկ 2 հատ թեղին, 2 հատ թույան և 1 հատ եղևնին՝ կտեղափոխվեն:

Կանաչապատման տարածքում նախատեսվում է տնկել Իլենի ֆորտունեի էմենալդ գույնի՝ 36 հատ, Ծորենի մանուշակագույն՝ 37 հատ, Գիհի հորիզոնական՝ 27 հատ, Գիհի կազակական՝ 15 հատ, Գիհի ցածրաճ՝ 23 հատ, Սոճի (հատվողների փոխարեն), Եղևնի սովորական Կրանստոնի՝ 10 հատ, Եղևնի սովորական Աուրեա՝ 4 հատ, Կենսաճառ (թույա) արևելյան՝ 4 հատ:

Կանաչապատ տարածքների ներքին ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային, հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ մոտ 500 խմ բուսահողի տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն Կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման համապատասխան՝ համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը:

Աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելմանն, մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ՝ մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ, տարածքի ջրցանում՝ փոշենստեցման նպատակով տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ, օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ: Նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կպաշտպանվեն չափազանց ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Շինարարության ընթացքում մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 2150000 ՀՀ դրամ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել:

Պարճառաքանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և քննարկումներն իրականացվել են Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում: Հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբեր- յալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Հանրային 2-րդ լսման ընթացքում՝ հողամասին կից մայթերի և կանաչապատ տարածքների բարեկարգման աշխատանքների, մասնաշենքի տանիքում



նախատեսված կանաչ տարածքների ընդլայնման, արևային մարտկոցների տեղադրման, հատվող, տեղափոխվող, տնկվող ծառերի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով հայտը ևս մեկ անգամ ուղղարկվել է «Նաիրի» բժշկական կենտրոն ՓԲ ընկերությանը լրամշակման՝ լրամշակված Երևանի քաղաքապետարանի կողմից ստացվել է դրական կարծիք:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «Նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցման կամ ընդլայնման կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինման կամ վերապրոֆիլավորման կամ կոնսերվացման կամ տեղափոխման կամ դադարեցման կամ փակման կամ քանդման կամ նախագծային փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության անհրաժեշտությունը որոշելու կարգը հաստատելու մասին» N 43-Ն որոշման հավելվածի համաձայն՝ գործունեության տարածքում առկա դիտարկարանի փակման համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ՝ փորձաքննության ենթակա լինելու վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով:

2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:

3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադքի և թափոնների, մնացորդային գրունտի հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել «Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

4. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել համաձայն Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին: Ծառերի հատման, տեղափոխման, տնկման աշխատանքներն իրականացնել՝ Երևանի



քաղաքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծին համաձայն:

5. Աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Նաիրի» բժշկական կենտրոն ՓԲԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի «Նաիրի» բժշկական կենտրոնի վերակառուցման և նոր մասնաշենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիբյան